ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

   Արկադի Պապոյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության արտաքին կապերի և սփյուռքի վարչության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Շվեյցարիայի Համադաշնություն, Ժնև

   2020 թվականի հունվարի 20-22-ը

4. **Հրավիրող կողմը.**

   ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կրթության միջազգային բյուրոյի տնօրեն Մանցեցա Մարոպեյի հրավեր

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   Մասնակցություն ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կրթության միջազգային բյուրոյի խորհրդի 69-րդ նստաշրջանի աշխատանքներին: Կրթության միջազգային բյուրոն ՅՈՒՆԵՍԿՕ-ի առաջին կատեգորիայի ինստիտուտ է, որը ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ բոլոր պետություններին տրամադրում է կրթության ոլորտում մասնագիտական աջակցություն և փորձաքննություն:

6. **Քննարկված թեմաները.**

- ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կրթության միջազգային բյուրոյի խորհրդի ղեկավար կոմիտեի նախագահի և փոխնախագահների ընտրություն,
- Կրթության միջազգային բյուրոյի 2019 թվականի գործողությունների և բյուջեի հաշվետվության քննարկում,
- Կրթության միջազգային բյուրոյի 2020 թվականի ծրագրի և բյուջեի նախագծի քննարկում,

- ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կրթության միջազգային բյուրոյի խորհրդի 69-րդ նստաշրջանում ներկայացված որոշումների ընդունում,
- ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կրթության միջազգային բյուրոյի խորհրդի 70-րդ նստաշրջանի կազմակերպում

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կրթության միջազգային բյուրոյի խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստերը գումարվում են տարին առնվազն մեկ անգամ, կարող են լինել նաև արտահերթ նիստեր: Խորհրդի կազմում ընդգրկված են 11 պետություններ՝ Հայաստանի Հանրապետություն, Հարավային Աֆրիկայի Հանրապետություն, Անգոլայի Հանրապետություն, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, Էկվադորի Հանրապետություն, Ղազախստանի Հանրապետություն, Քուվեյթի Պետություն, Պորտուգալիայի Հանրապետություն, Կատարի Պետություն, Սլովենիայի Հանրապետություն, Շվեյցարիայի Համադաշնություն:

Կրթության միջազգային բյուրոյի խորհրդի 69-րդ նստաշրջանի բացումն իրականացրեց Խորհրդի նախագահ Ժազիրա Կուլ-Մուխամմեդը: Ողջույնի խոսքով հանդես են եկել նաև Կրթության միջազգային բյուրոյի տնօրեն Մ.Մարոպեն և Խորհրդի անդամ-պետությունների ներկայացուցիչները: Խորհրդի նիստի աշխատանքներին տեսակոնֆերանսի ձևաչափով մասնակցում էր նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կրթական հարցերով փոխտնօրեն Ստեֆանիա Ջիաննինին:

Խորհրդի 69-րդ նստաշրջանի օրակարգի հաստատումից հետո քննարկվեց Խորհրդի ղեկավար կոմիտեի Նախագահի և Փոխնախագահների ընտրության հարցը: Ղեկավար կոմիտեի կազմում ընդգրկվում են նախագահն ու 5 փոխնախագահները, որոնք ներկայացված են ըստ խմբերի և երկրամասերի:

Համապատասխան զեկույցներով հանդես եկան Ղազախստանի, Սլովենիայի, Չինաստանի, Պորտուգալիայի և Հայաստանի ներկայացուցիչները:

Խորհրդի նիստին քննարկվել են Կրթության միջազգային բյուրոյի գործունեության մի շարք հարցեր, որոնք ուղղված են ապահովելու Կայուն

Զարգացման 4-րդ և 5-րդ Նպատակադրումների իրագործումը: Ներկայացված առաջարկությունները բխում են նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կրթության ոլորտի ռազմավարությունից: Ուսումնական ծրագիր, ուսուցում, դասավանդում և գնահատում համատեքստում կարևորվել են հետևյալ ուղղությունները՝

- նորարարություն և առաջնորդություն,
- քննադատական և զարգացման խնդիրներ,
- կրթության և ուսումնառության որակի համակարգային հզորացում ու զարգացման արդիականություն,
- գիտելիքի ստեղծում և կառավարում,
- առաջնորդություն գլոբալ երկխոսության համար,
- ինստիտուցիոնալ և բովանդակային զարգացում:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության միջազգային բյուրոյի խորհրդի որոշմամբ Հայաստանն ընտրվեց Խորհրդի ղեկավար կոմիտեի նախագահ 2020-2021 թվականների համար: Համաձայն ընդունած որոշման, Խորհրդի 69-րդ նիստի նախագահումն իրականացվել է իմ կողմից: Ներկայացումների և քննարկումների արդյունքում Խորհրդի կողմից հաստատվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կրթության միջազգային բյուրոյի խորհրդի 2019 թվականի գործողությունների և բյուջեի հաշվետվությունը, Կրթության միջազգային բյուրոյի 2020 թվականի ծրագրի և բյուջեի նախագիծը: Խորհրդի 69-րդ նիստին անդամ-պետությունների քվեարկությամբ ընդունվել են վեց որոշումներ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Խորհրդի 69-րդ նիստին առաջարկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կրթության միջազգային բյուրոյի խորհրդի 70-րդ նստաշրջանը կազմակերպել 2020 թվականի դեկտեմբերին, իսկ Խորհրդի ղեկավար կոմիտեի նիստը՝ 2020 թվականի սեպտեմբերին: Հաշվի առնելով ընդունված որոշումների

կարևորությունը կարող են կազմակերպվել նաև արտահերթ նիստեր: Անդամ-պետությունները՝ հիմք ընդունելով նիստի ընթացքում քննարկված հարցերը, ներկայացված նախաձեռնությունները և Խորհրդի ղեկավար կոմիտեի նախագահի դիտարկումները, առանձնահատուկ կարևորեցին ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կրթության միջազգային բյուրոյի գործունեությունը և առաջարկեցին հետևողական քայլեր ձեռնարկել ակտիվացնելու անդամ-պետությունների մասնակցային դերը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Արկադի Պապոյան

24.01.2020թ.